

**« Կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե**  
**Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ 58/1**

**13 դեկտեմբերի 2013 թ.**

Քննարկվեց Ա/Ձ Վարսիկ Վարդանյանի դիմում-բողոքը « ԿԱ ՊԵԿ 13.11.2013 թ-ի հսկիչ գնումների արդյունքների վերաբերյալ թիվ 2219453 արձանագրության դեմ:

Քննարկման ընթացքում նշվեց, որ համաձայն « ԿԱ ՊԵԿ Կենտրոնի ՀՏ պետի 12.11.2013 թ-ի թիվ 2219453 հանձնարարագրի Ա/Ձ Վարսիկ Վարդանյանի մոտ կատարվել է հսկիչ-դրամարկղային մեքենաների շահագործման կանոնների պահպանման ուսումնասիրություն (հսկիչ գնում): Արդյունքում կազմվել է հսկիչ գնումների արդյունքների վերաբերյալ 13.11.2013 թ-ի թիվ 2219453 արձանագրությունը (այսուհետ նաև արձանագրություն), որում մասնավորապես նշված է.

Կենտրոնի ՀՏ հարկային տեսուչ Յ.Վարդանյանի կողմից 13.11.2013 թ-ին ժամը 16:45-ին ք.Երևան, Քոչար և Կուզնեցով փոխոցների խաչմերուկ հասցեում գտնվող խանութից կատարվեց հսկիչ գնում 1570 դրամի չափով, 1 հատ «Ջոնսոն» օճառ՝ 250 դրամ արժեքով, 1 հատ օդորակիչ բալոն՝ 600 դրամ արժեքով, 2 հատ անձեռոցիկ՝ 1 հատը 150 դրամ արժեքով և 3 հատ զուգարանի թուղթ՝ 1 հատը 140 դրամ արժեքով, որի դիմաց վճարումը կատարվեց կանխիկ դրամով: Վաճառող-գանձապահ Վարսիկ Վարդանյանը գումարը չմուտքագրեց ՀԴՄ և համապատասխան գումարի ՀԴՄ կտրոն չտրամադրեց:

Ուսումնասիրությունն իրականացնող հարկային ծառայողների կողմից ներկայացվեցին ծառայողական վկայականները և ուսումնասիրության հանձնարարագիրը՝ ծանոթացման: Այնուհետև ժամը 14:46-ին ՀԴՄ-ից դուրս բերվեց <Z> հաշվետվություն՝ 9280 դրամ ընդհանուր գումարով, որում ներառված չէր կատարված վճարման արժեքը: <Z> հաշվետվությունը դուրս բերելուց հետո կատարված վճարման արժեքը՝ 1570 դրամը, ժամը 14:47-ին մուտքագրվեց ՀԴՄ, դուրս բերվեց կտրոն և ժամը 14:48-ին նորից դուրս բերվեց <Z> հաշվետվություն՝ 1570 դրամ ընդհանուր գումարով:

Ուսումնասիրությամբ պարզվեց, որ խախտվել են « Կառավարության 26.08.04թ. թիվ 1325-Ն որոշմամբ հաստատված ՀԴՄ շահագործման կանոնների 19-րդ կետի «բ» ենթակետի պահանջները, որն առաջացնում է պատասխանատվություն «հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» « օրենքով սահմանված կարգով:

**Ա/Ձ Վարսիկ Վարդանյանի բողոքում բերված փաստարկները.**

2013 թ-ի նոյեմբերի 13-ին, ժամը 14:15-ից մինչև 14:20-ի սահմաններում Կենտրոնի ՀՏ հարկային տեսուչ Է.Գասպարյանի կողմից կատարվել է ՀԴՄ-ի ստուգում: Հարկային տեսուչը Ա/Ձ Վարսիկ Վարդանյանին հայտնել է, որ ինչ-որ ժամանակ առաջ կատարվել է ՀԴՄ-ի ստուգում, որի ընթացքում ՀԴՄ կտրոն չի տրամադրվել: Հարկային տեսուչը տեղեկացրել է նաև, որ Ա/Ձ Վարսիկ Վարդանյանի վերաբերյալ թեժ գծով ստացվել է բողոք, որի հետևանքով նա պարտավոր է արձանագրել ՀԴՄ-ի շահագործման կանոնների խախտում:

Ա/Ձ Վարսիկ Վարդանյանը չհամաձայնվելով ստուգող տեսուչի բերված փաստարկների չի ստորագրել ներկայացված փաստաթղթերը: Մի քանի որ անց Ա/Ձ Վարսիկ Վարդանյանը փոստով ստացել է հանձնարարագիրը և արձանագրությունը:

Ա/Ձ Վարսիկ Վարդանյանն իր բողոքում նշում է, որ խանութում տեղադրված է տեսանկարահանող սարք և առկա է համապատասխան տեսագրությունը, որի համաձայն ստուգումը կատարել է ոչ թե Յ.Վարդանյանը, այլ՝ Է.Գասպարյանը:

Ըստ Ա/Ձ Վարսիկ Վարդանյանի բողոքի, արձանագրությունում նշված ստուգման ժամերը չեն համապատասխանում իրականությանը, մասնավորապես՝ ստուգումը կատարվել է ժամը 14:15-ից մինչև 14:20-ի սահմաններում Է.Գասպարյանի կողմից, որին ՀԴՄ կտրոն տրամադրվել է: Արձանագրությունում նշված ժամերին Յ.Վարդանյանը և Է.Գասպարյանը խանութ չեն այցելել և գնում չեն կատարել:

Ելնելով վերոգրյալից Ա/Ձ Վարսիկ Վարդանյանը խնդրում է անվավեր ճանաչել արձանագրությունը:

**ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.**

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), լսելով Ա/Ձ Վարսիկ Վարդանյանի և հսկիչ գնումն իրականացրած պաշտոնատար անձանց բերված փաստարկները, ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Մինչև Ա/Ձ Վարսիկ Վարդանյանի դիմում-բողոքի քննարկումը Հանձնաժողովը ուսումնասիրեց բողոքի հետ ներկայացված տեսանյութերը: Վերջիններիս ուսումնասիրությամբ Հանձնաժողովն արձանագրեց, որ.

1. Տեսանյութերը չեն վերարտադրում կատարված հսկիչ գնման ամբողջ ընթացքը, որի հետևանքով Հանձնաժողովին հնարավորություն չընձեռնվեց վերջնական եզրակացության հանգել ՀՀ ԿԱ ՊԵԿ 13.11.2013 թ-ի հսկիչ գնումների արդյունքների վերաբերյալ թիվ 2219453 արձանագրությունում արտացոլված տեղեկությունների և Ա/Ձ Վարսիկ Վարդանյանի բերված փաստարկների իսկությունը պարզելու համար:

2. Տեսանյութերի ուսումնասիրությամբ պարզվեց նաև, որ Ա/Ձ Վարսիկ Վարդանյանի կողմից ոչ բոլոր հաճախորդներին են կատարված գնումների դիմաց տրվում ՀԴՄ կտրոններ:

Միաժամանակ սույն գործում առկա նյութերի ուսումնասիրության արդյունքում Հանձնաժողովը եկավ եզրակացության, որ Ա/Ձ Վարսիկ Վարդանյանի մոտ հսկիչ գնումն իրականացվել է գործող ընթացակարգերի խախտմամբ: Մասնավորապես, Հանձնաժողովն արձանագրեց այն փաստը, որ հսկիչ գնումների արդյունքների վերաբերյալ 13.11.2013 թ-ի թիվ 2219453 արձանագրությունում նշվել է, որ Կենտրոնի ՀՏ հարկային տեսուչ Յ.Վարդանյանի կողմից հսկիչ գնումը կատարվել է 13.11.2013 թ-ին ժամը 16:45-ին, սակայն իրականում հսկիչ գնումը կատարվել է ոչ թե ժամը 16:45-ին, այլ՝ ժամը 14:45-ին:

Բացի այդ, ՀՀ կառավարության 27.11.2003 թ-ի թիվ 1561-Ն որոշմամբ հաստատված <Հսկիչ գնումների ֆինանսական աղբյուրների և ձեռք բերված ապրանքների տնօրինման կարգ>-ի (այսուհետ նաև Կարգ) 6.1 կետի համաձայն. <Հսկիչ գնման (գնումների) արդյունքում հսկիչ գնում իրականացրած հարկային մարմնի պաշտոնատար անձի կողմից հանձնարարագիրը ներկայացվելուց և արձանագրությունը կազմվելուց հետո, բայց ոչ ուշ, քան սույն կարգի 6.2-րդ կետում նշված ժամկետները, տնտեսավարող սուբյեկտի անունից ապրանքներ վաճառող և (կամ) դրամական հաշվարկ կատարող աշխատողին են վերադարձվում հսկիչ գնմամբ (գնումներով) ձեռք բերված ապրանքը (ապրանքները), եթե չեն փոփոխվել դրա (դրանց) գնման պահին առկա ապրանքային հատկանիշները>:

Իր հերթին, ՀՀ ԿԱ ՊԵԿ վերադաս հարկային մարմնի կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարներին, հարկային (տարածքային) տեսչությունների պետերին հասցեագրված ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 02.06.2011 թ-ի թիվ 01/4-4/[134013]-11 շրջաբերական նամակի (այսուհետ՝ շրջաբերական նամակ) <ՀԴՄ ստուգման ակտի

բովանդակության տիպային ձև>-ը բաժնում հստակ նշված են հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման ճշտության ստուգման ընթացքում իրականացվող գործողությունները, ինչպես նաև այդ գործողությունների արդյունքում ձեռք բերվող և ստուգման ակտում պարտադիր արտացոլման ենթակա տվյալները (ապացույցները), որոնք անհրաժեշտ են ակտով արձանագրված խախտումն հիմնավորված համարելու համար: Մասնավորապես, շրջաբերական նամակի <<ԴՄ ստուգման ակտի բովանդակության տիպային ձև>-ը բաժնում մասնավորապես նշված է. <Գնված ապրանքները ստուգումն անցկացնող հարկային ծառայողների կողմից ետ վերադարձվեցին տնտեսավարողին (արձանագրությունը կցվում է), և ետ ստացվեց հսկիչ գնման գումարը, որից հետո տպվեց վերադարձի կտրոնը կատարված վճարման արժեքի չափով>:

Քննարկվող դեպքում, ստուգման ընթացքում ձեռք բերված ապրանքները սահմանված կարգով ետ չեն վերադարձվել տնտեսավարող սուբյեկտի անունից ապրանքներ վաճառող և (կամ) դրամական հաշվարկ կատարող աշխատողին: Այսինքն, խախտվել են << կառավարության 27.11.2003 թ-ի թիվ 1561-Ն որոշմամբ հաստատված կարգի, ինչպես նաև շրջաբերական նամակի պահանջները:


Հարկ է նշել նաև, որ սույն գործի քննարկման արդյունքում ուսումնասիրությունն (հսկիչ գնում) իրականացրած պաշտոնատար անձանց կողմից չներկայացվեցին հիմնավոր ապացույցներ տվյալ հսկիչ գնումը ոչ թե Է.Գասպարյանի, այլ Յ.Վարդանյանի կողմից կատարված լինելու վերաբերյալ:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով <<Հարկային ծառայության մասին> << օրենքի 43.1-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

**ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝**

Չեղյալ համարել << ԿԱ ՊԵԿ 13.11.2013 թ-ի հսկիչ գնումների արդյունքների վերաբերյալ թիվ 2219453 արձանագրությունը:

Հանձնաժողովի նախագահ



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ